ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-4/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

09.09.2024թ.
Ժամը 10^{30}

Ի գիտություն՝ քանի որ հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱ վարչության պետ, գնդապետ Կ. Գրիգորյանը (ԳԱՊ), բացակայում է նիստից, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները՝ նիստը նախագահում է ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱ վարչության 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ Ա. Սիմոնյանը:

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱ վարչության 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ Ա. Սիմոնյան,
ՀՀ ՊՆ Ս և ՏԱՎ ԱԾ Շ և Վ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Յախշյան,
ՀՀ ՊՆ Ս և ՏԱՎ ԱԾ Շ և Վ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Հովհաննիսյան:

Բացակայում է՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱ վարչության պետ, գնդապետ Կ. Գրիգորյանը (ԳԱՊ),

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ, Ս.Եսոյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-4/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ս.Եսոյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-4/5» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-4/5» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ս.Եսոյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-4/5» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակցի անվանումը
1	«ԷԼԻՏ ԱԼԻԱՆՍ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-4/5» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ս.Եսոյան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-4/5» ծածկագրով ընթացակարգին մասնակից «ԷԼԻՏ ԱԼԻԱՆՍ» ՍՊԸ-ն հայտի ապահովումը ներկայացրել է կանխիկ փողի ձևով, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետը՝ համաձայն ՀՀ Ֆինանսների Նախարության N 03/12-1/2884-2024 գրության, գնահատող հանձնաժողովը 09.09.2024թ. որոշեց կասեցնել նիստը և վերոնշյալ փաստաթղթի իսկությունը ստուգելու նպատակով դիմել ՀՀ ՊՆ ֆինանսաբյուջետային վարչությանը: 13.09.2024թ. շարունակելով հայտերի գնահատման և ամփոփման նիստը՝ գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ ՀՀ ՊՆ ֆինանսաբյուջետային վարչության տրամադրած տեղեկատվության համաձայն «ԷԼԻՏ ԱԼԻԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված կանխիկ փողի ձևով հայտի ապահովումը համապատասխանում է «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-4/5» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին:

2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-4/5» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ս. Եսոյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-4/5» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ է ներկայացրել 1 մասնակից.

Հ/հ	Ծառայության անվանումը	չ/մ	Գնման գինը (միավորի գների հանրագումարով) / ՀՀ դրամ/	Մրցույթին մասնակցող կազմակերպության		
				անվանումը	գնային առաջարկը / ՀՀ դրամ/ միավորի գների հանրագումար	
					առանց ԱԱՀ	ընդհանուր գինը
1	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ (ԳԱՀ մակնիշի մարդատար ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ)	դրամ	14 805 900	«ԷԼԻՏ ԱԼԻԱՆՍ» ՍՊԸ	8 883 540	8 883 540

Համաձայն ներկայացված փաստաթղթերի՝ «ԷԼԻՏ ԱԼԻԱՆՍ» ՍՊԸ-ն չի հանդիսանում ԱԱՀ վճարող:

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Բանակցություններ չեն վարվել:

Տվյալների ամփոփման արդյունքում «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-4/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված և ընտրված մասնակցի հետ կնքվելիք պայմանագրով սահմանված ընտրված մասնակցի կողմից՝ **1-ին չափաբաժնի մասով** գնային առաջարկով միավորի գների հանրագումարի տեսքով առաջարկված գումարը՝ **Մ.Գ.** կկազմի **8 883 540** ՀՀ դրամ, պատվիրատուի կողմից ընթացակարգի հրավերով ներկայացված ծառայությունների համար սահմանված միավորի գնման գնի հանրագումարի տեսքով նշված ընդհանուր նախահաշվային գումարը **Ն.Գ.՝ 14 805 900** ՀՀ դրամ: ՈՒստի «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-4/5» ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծում ներառված բանաձևի **Մ.Գ./Ն.Գ.** գործակիցը կկազմի **1-ին չափաբաժնի** մասով՝ **0.6**:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-4/5» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Ս. Եսոյան)

4.1 Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը՝ 13.09.2024թ. «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-4/5» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում ընտրված մասնակից ճանաչվեց «ԷԼԻՏ ԱԼԻԱՆՍ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-4/5» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը: Սույն ընթացակարգում անգործության ժամկետ չի սահմանվում, քանի որ հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.

(Ս. Եսոյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-4/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող	Ա. Սիմոնյան
Գնահատող	Ա. Յախշյան
Գնահատող	Ա. Հովհաննիսյան
Գնումները համակարգող	Ս. Եսոյան